ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՆՈՐՔ» ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 0047, Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ 32/6

հեռ. (+ 374 10) 65 08 60
Ֆաքս (+374 10) 65 20 02
էլ. փոստ g_sayadyan@moh.am
norq-klinik@mail.r

№ 299/14 01.10 2014թ.

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով գնման ընթացակարգի
գրանցված հնարավոր Մասնակիցներին
apranq-11-2@shh.gnumner.am

Հարգելի գործընկերներ

<<Նորք հոգեբուժական կենտրոն>> ՓԲԸ-ի 2014թ. կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր ընկերությունների միջև կնքված համապատասխան շրջանակային համաձայնագրերի շրջանակներում ձեռքբերելու սննդամթերք: Սույն գնման ընթացակարգի ծածկագիրն է ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-14/7:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Գ. Հովսեփյան 32/6 հասցեով, ընդունարան, մինչև 13 հոկտեմբերի 2014թ. ժամը 11:00-ն:

Հայտերը կբացվեն <<Նորք հոգեբուժական կենտրոն>> ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Գ. Հովսեփյան 32/6 հասցեով, 13 հոկտեմբերի 2014թ. ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել սահմանված կարգով կազմված ծրարով՝ շրջանակային համաձայնագրեր կնքելու նպատակով հայտարարված հրավերին համապատասխան:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը, ընթացակարգին մասնակցելու դիմումի և գնային առաջարկի օրինակելի ձևերը: Մասնակիցը կարող է գնային առաջարկը ներկայացնել օրինակելի ձևերից տարբերվող այլ ձևերով, սակայն ՀՀ գնումների մասին օրենսդրության և սույն հրավերով ներկայացված օրինակելի ձևերի բովանդակային պայմանների պարտադիր պահպանմամբ, հակառակ դեպքում մասնակցի գնային առաջարկը ենթակա է մերժման:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կենտրոնի տնօրենի ժ/պ՝ Գ. Սայադյան